

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (68)
2015 թ.

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո ղ ի ի ղ

Սամվել Դիլբանդյան -

ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ
Կարեն Գևորգյան -

ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ
Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Դավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վիգեն Քոչարյան - ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
Էլ. կայք՝ <http://publications.y-su.am/>

Խմբագրությունը կարող է
հրատարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
18.06.2015

Հանձնված է տպագրության
10.09.2015

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (68)
2015 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Карен Геворгян -

к.ю.н., зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артуր Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
е-mail: a_petrosyan@ysu.am
web: <http://publications.ysu.am/>

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 18.06.2015
Подписано к печати 10.09.2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գևորգ Իսրայելյան

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 5

Արմինե Մելիքսեթյան

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉԿՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ 11

Հասմիկ Սմբատյան

ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻՆ ԲՈՆԵԼԻՍ ՎՆԱՍ ՊԱՌՃԱՌԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 19

Արմեն Մանասյան

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՀԵՏ ԶԿԱՊԿԱԾ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 25

Էմմա Ավագյան

ՄԵՂԱԴՐՅԱԼԻՆ ՀԱՍԿԱՆԱԼԻ ԼԵԶՎՈՎ, ԱՆՀԱՊԱՂ ԵՎ ՀԱՆԳԱՄԱՆՈՐԵՆ
ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ՀԻՄՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼԸ 34

Գոռ Միրզոյան

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՆՁԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 41

Արամ Այվազյան

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ ԵՎ ՈՂ
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄՔ 56

Լալա Գրիգորյան

ԱԿՆՀԱՅՏ ԱՆՕԳՆԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 63

Աննա Խաչատրյան

ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ... 69

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԶԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔ

Սամվել Մուրադյան

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ
ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ 76

Սահակ Մանուկյան

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ84

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սյուզաննա Ավետիսյան

ՊԱՐՏԱԴԻՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ91

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անի Սիմոնյան

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ..... 104

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Սամվել Մուրադյան

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի
դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու*

Պետության կողմից տնտեսությանը միջամտելու սահմանները պայմանավորված են այն տնտեսական և սոցիալական հիմնախնդիրներով, որոնք չեն կարող լուծվել ինքնաբերաբար՝ սոսկ շուկայական տնտեսության ինքնակարգավորման ավանդական կանոնների կիրառմամբ: Ազատ ձեռներեցությունը ենթադրում է մի շարք առանձին հարաբերությունների համակարգ, որոնց բնականոն կարգավորման երաշխիքը բացառապես պետության ողջամիտ միջամտությունն է, քանզի այդ ոլորտում ծագող խնդիրների լուծման համար անխուսափելիորեն անհրաժեշտ է պետական աջակցություն: Միաժամանակ կան ոլորտներ, որոնք շուկայական կառուցակարգերի հասանելիության սահմաններից դուրս են:

Այս պարագայում նկատի ունենք, այսպես կոչված, «հանրային բարիքները» դրանք այն ապրանքները և ծառայություններն են, որոնք, անկախ այն բանից՝ հասարակության առանձին անդամներ վճարել են դրանցից օգտվելու համար, թե ոչ, կարող են օգտագործվել հասարակության բոլոր անդամների կողմից¹: Օրինակ, շուկայական տնտեսության տեսանկյունից այդպիսիք են պաշտպանության և ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, պաշտպանության, կրթության բնագավառները և այլն: Շուկան իրեն բնորոշ առանձնահատկություններով ի վիճակի չէ արտադրել «հանրային բարիքներ», բացի այդ՝ առնվազն դժվար է որոշել հասարակության յուրաքանչյուր անդամի կողմից սպառվող այդ բարիքների «օգտակարությունը»: այսինքն, հնարավոր չէ նախապես սահմանել, թե «հանրային բարիքի» համար որքան պետք է վճարի յուրաքանչյուրը: Միաժամանակ, հաշվի առնելով, որ խոսքը հանրային շահերի բավարարման մասին է, որի պարագայում ակնհայտ է դառնում պետության պարտավորության իրավաչափությունը, տրամաբանական է, որ պետությունը պետք է իր վրա վերցնի դրանց արտադրության հոգսը կամ առնվազն աջակցի և կարգավորի արտադրության գործընթացը և կազմակերպի քաղաքացիների կողմից դրանց համավճարումը:

Պետությունը պետք է գնահատի ծագող հիմնախնդիրները հասարակական հեռանկարների տեսանկյունից և լուծի առկա խնդիրները՝ այդ նպատակով իրականացնելով պետական կարգավորում: Ընդունված է «պետական կարգավորում» եզրույթը դիտարկել ինչպես լայն և այնպես էլ նեղ իմաստով, ինչը հնարավորություն է տալիս գիտագործնական չափանիշներով առավել համարժեքորեն բացահայտել վերջինիս բոլոր ասպեկտները:

Լայն առումով այն դրսևորվում է *պետության կողմից տնտեսության բնագավառի հասարակական հարաբերությունների իրավական կարգավորմամբ*: Այդպիսի կարգավորման սուբյեկտներն են պետական իշխանության օրենսդիր և գործադիր մարմինները: Պետական կարգավորման իրավական ավանդական ձևերն են իրավունքի

¹ Տե՛ս Шишкин А. Ф. Экономическая теория, кн. 2. М., 1996, էջ 387:

աղբյուրները՝ օրենքները, ենթաօրենսդրական ակտերը և որոշ վերապահումով (պայմանավորված տվյալ երկրի իրավական համակարգով)՝ նաև դատական նախադեպը: Օրենսդիր իշխանությանն է վերապահված գործադիր իշխանության իրացման կարևորագույն ոլորտների պետական կարգավորումը: Նեղ առումով պետական կարգավորումը պետական կառավարման գործառույթներից մեկն է¹: Այս դեպքում ելակետ է ընդունվում «կառավարում» եզրույթի բնորոշման դասական մեթոդաբանությունը, ինչն ընդունված է վարչական իրավունքում:

Պետական կարգավորման հիմնական գործընթացը, կախված պայմանների փոփոխություններից, պետության կողմից հասարակական հարաբերությունների սուբյեկտների համար վարքագծի ընդհանուր կանոնների սահմանումը և դրանց ճշգրտումն է: Այն ներառում է նաև այս կամ այն հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի պահանջների կատարման նկատմամբ համարժեք վերահսկողությունը, համապատասխան հարաբերությունների մասնակիցների գործունեության համակարգումը, վերջինիս ընդհանուր ուղղությունների սահմանումը, այդ մասնակիցների իրավունքների և օրինական շահերի համակողմանի պաշտպանությունը, տնտեսության բնագավառում իրականացվող պետական քաղաքականության առաջնայնության որոշումը և դրանց ամրագրումն իրավական նորմերի միջոցով և այլն:

Տնտեսության պետական կարգավորումը կոչված է համակարգելու տնտեսական գործընթացները և շաղկապել, հնարավորինս ներդաշնակ դարձնել մասնավոր ու հասարակական շահերը: Այն, որ հանրային նշանակության ոլորտներում պետությունը հանդես է գալիս կարգավորման առավել լայն գործառույթներով, բնավ չի ենթադրում, որ այս դեպքում պետությունը կարող է լրացուցիչ պարտավորություններ սահմանել այդ ոլորտում ներգրավված տնտեսավարող սուբյեկտների համար, քանի որ դրանք կհակասեն ազատ ձեռներեցության և տնտեսական մրցակցության սկզբունքին, ուստի պարտավորությունների մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ նույն այդ սուբյեկտների համար սահմանվում են լրացուցիչ, համարժեք արտոնություններ:

Տնտեսության պետական կարգավորման կառուցակարգը պարզելու համար նպատակահարմար է բնութագրել այն օբյեկտները, որոնց ուղղված է պետության գործունեությունը, և այն գործիքները, որոնց օգնությամբ լուծվում են պետության տնտեսական քաղաքականության խնդիրները:

Պետական կարգավորման օբյեկտներն են՝ ոլորտները, տարածաշրջանները, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական կյանքի երևույթները և պայմանները: Դրանց հետ կապված խնդիրները չեն կարող լուծվել ինքնըստինքյան և տեսանելի ապագայում, մինչդեռ այդ խնդիրների լուծումը անհրաժեշտ է տնտեսության բնական գործունեության և սոցիալական կայունության պահպանման տեսանկյունից:

Որպեսզի հնարավորինս համալիր վերլուծենք շուկայական տնտեսության պետական կարգավորման մեթոդները, անհրաժեշտ է նախ և առաջ պարզել պետության տնտեսական գործառույթների էությունը: Դրանք կարելի է դասակարգել՝ առանձնացնելով երկու հիմնական ուղղություններ:

Առաջինը շուկայական կառուցակարգի պահպանության, դրա բնականոն աշխատանքի պայմանների ապահովումն է: Նման պայմաններից են տնտեսության պարբերաբար ապամենաշնորհացումը, նրա սղաձի (ինֆլացիայի) կանխարգելումը, պե-

¹ Տե՛ս Մուրադյան Ս., Անցումային տնտեսության պետական կառավարումը // Հանրային կառավարում, գիտական հանդես, Երևան, 2006, էջ 52:

տության ֆինանսական համակարգը անհրաժեշտ չափերով և անպակասորդ (անդեֆիցիտ) վիճակում պահելը, արտադրության անկման կասեցումը և այլն:

Երկրորդը էկոլոգիական և սոցիալական հիմնախնդիրների լուծումն է: Առանց պետության աջակցության անհնար է շուկայական տնտեսությունը դարձնել էկոլոգիապես ապահով, երաշխավորել մարդու սոցիալ-տնտեսական իրավունքների իրականացումը, հարթել կառուցվածքային ու տարածաշրջանային անհամասնությունները¹:

Արդեն տեղի են ունեցել գործընթացներ, որոնք տնտեսությունում զգալիորեն նվազեցրել են պետական կառավարման կշիռը հատկապես վերը նշված չափանիշներով: Գործադիր իշխանությունը որոշ դեպքերում հրաժարվում է ուղղակի կառավարման գործառնությունից և կիրառում է նոր մոտեցում՝ պետական կարգավորում, որն առավել արդյունավետ է: Եթե պետական կառավարումն ուղղակի միջամտություն է կառավարման օբյեկտների գործունեությանը, ապա պետական կարգավորումը տրամադրում է գործունեության հարաբերական ազատություն: Սակայն պետական կառավարման ու պետական կարգավորման միջև նպատակային նշանակության առումով չկա սկզբունքային տարբերություն: Ըստ էության, կարգավորումը պետական-կառավարչական գործունեության կարևոր բաղադրիչներից է:

Պետական կարգավորման իրացման հիմնական եղանակը իրավական կարգավորումն է, որի հիմքը նորմատիվ կողմն է, այսինքն՝ առանձին անհատների և սոցիալական խմբերի վարքագծի կանոնների (նորմերի) մշակումը և դրանց իրավաբանորեն ամրագրումը: Նման նորմերը տարբեր կերպ են ընկալվում, ինչը պայմանավորված է դրանց նպատակներով ու բովանդակությամբ: Դրանք երբեմն սահմանափակում են ազատությունը, նախանշում են դրանց սահմանագծերը, սակայն մեծ մասամբ օգնում են կարգավորելու մարդկանց փոխհարաբերությունները: Իրավական կարգավորումը պետության, նրա լիազոր մարմինների իրավական նորմերի ընդունման գործունեությունն է, որն անհրաժեշտ է հասարակական կյանքը կանոնակարգելու համար:

Տնտեսության բնագավառում կարևոր նշանակություն ունի վարչաիրավական կարգավորումը, որը սոցիոլոգիական, նորմատիվ և գործնական չափանիշներով ազդեցության բաղադրիչների միասնությունն է: Այն սկսվում է այն պահից, երբ առաջանում է հասարակական պահանջ՝ կարգավորելու հասարակական, ինչպես նաև տնտեսական բնագավառի հարաբերություններ: Նորմատիվ իրավական ակտի ձևավորումն իրականացվում է ներկայի և անցյալի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա, սակայն բուն նորմը պետք է ընդունվի դեռևս անորոշ ապագայում: Այսինքն՝ սոցիոլոգիական տեսանկյունից իրավական կարգավորումն ունի կանխատեսելի որակ և վկայում է այն մասին, որ մարդիկ կարող են կանխորոշել իրենց «վաղվա կյանքը»:

Պետությունն իր գործառնությունները կատարում է՝ կիրառելով տնտեսության վրա ներգործելու տարբեր մեթոդներ, որոնցից բոլորն էլ այս կամ այն չափով արդյունավետ են, սակայն խնդիրը այն է, թե ինչպես յուրաքանչյուրի համար որոշել այն տնտեսական իրավիճակները, ոլորտները, որտեղ որ եղանակն է նպատակահարմար կիրառել և այլն: Տնտեսական կորուստները սկսվում են այն ժամանակ, երբ չափից ավելի նշանակություն է տրվում տնտեսական կամ վարչաիրավական մեթոդներին: Գիտագործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ այս մեթոդներն ինքին անխոցելի են, սակայն երբ չի պահպանվում անհրաժեշտ համամասնություն, դրանք չեն ծառայում իրենց նպատակին, ինչի հետևանքով կարող է այն թյուր

¹ Ст'у Лампарт Х. Социальная рыночная экономика. М., 1993, էջ 69:

պատկերացումը ձևավորվել, թե դրանք հիմնավորված չեն: Կարևոր հարցադրում է նաև այն, թե արդյոք նշված երկու մեթոդների համամասնության չափանիշները կարող են նույնական լինել բոլոր ոլորտներում: Կարծում ենք, ինչը վկայում են նաև մեր կողմից վերն արտահայտված դատողությունները, այդ չափանիշները չեն կարող նույնական լինել, քանի որ նշված ոլորտներում անխուսափելի է վարչական մեթոդների գերակայությունը:

Շուկան գերազանցապես ինքնակարգավորվող համակարգ է, և եթե դրա վրա կարելի է ազդել, ապա հիմնականում տնտեսական մեթոդներով: Սակայն դրանից չի կարելի հետևություն անել, որ զարգացած շուկայական հարաբերություններում վարչաիրավական մեթոդները գոյության իրավունք չունեն:

Տնտեսական ու վարչաիրավական մեթոդների կոշտ տարանջատումը հիմնավորված չէ: Կարչարարության տարր է պարունակում ցանկացած տնտեսական կարգավորիչ, թեկուզ և այն պատճառով, որ այն վերահսկվում է որևէ պետական մարմնի կողմից: Բացի այդ, յուրաքանչյուր վարչական կարգավորիչի մեջ կա ինչ-որ տնտեսական տարր այն իմաստով, որ դա անուղակիորեն անդրադառնում է տնտեսական գործընթացի մասնակիցների վարքագծի վրա:

Չնայած տնտեսական ու վարչաիրավական մեթոդներն ունեն որոշ նմանություն, սակայն դրանք էապես տարբերվում են միմյանիցից: Մասնավորապես, վարչական հնարքները նշանակալից կերպով նեղացնում են տնտեսական գործունեությունում ընտրության ազատությունը: Այդպիսի երևույթներ տեղի են ունենում այնտեղ, որտեղ վարչարարությունը տնտեսապես հիմնավորված չէ: Այն ձեռք է բերում ամբողջատիրության գծեր և վերածվում է բաշխիչ-հրամայական համակարգի: Նման պայմաններում պետական վերահսկողությունը դառնում է համատարած՝ ընդգրկելով ողջ արտադրությունը, դրա կառուցվածքը, գները, արտադրանքի որակը, ծախսերը, աշխատավարձը, շահույթը և դրա բաշխումը, մատակարարների ու սպառողների միջև առկա կապերը, մի խոսքով՝ ողջ տնտեսական գործընթացի հիմնական բաղադրիչները:

Տնտեսական մեթոդները որևէ չափով չեն սահմանափակում ընտրության ազատությունը, իսկ երբեմն էլ ընդլայնում են այն. դա «գրավիչ» խթան է, որին տնտեսավարող սուբյեկտը, որպես կանոն, շահագրգռված է լինում արձագանքելու, և արդյունքը վրա է հասնում առանց պետության վարչական միջամտության: Այնուամենայնիվ գոյություն ունեն ոլորտներ, որտեղ վարչաիրավական մեթոդները բավական արդյունավետ են, իսկ հաճախ էլ ունեն ակնհայտ առավելություններ տնտեսական մեթոդների նկատմամբ:

Ակնհայտ է, որ ժամանակակից շուկայական համակարգն անիմաստ է առանց պետության միջամտության: Սակայն կան որոշակի սահմաններ, որոնցից այն կողմ շուկայական կառուցակարգերը ձևախեղվում են, անկում է ապրում արտադրության արդյունավետությունը: Այս պարագայում առկա են կարգավորման որոշ սահմանափակումներ, օրինակ՝ անթույլատրելի է պետության ցանկացած գործունեություն, որը խոցելի կդարձնի, կթուլացնի շուկայական կառուցակարգերը (ամբողջատիրական դիրեկտիվ պլանավորում, համատարած վարչական վերահսկողություն և այլն): Դա չի նշանակում, որ պետությունը մի կողմ է քաշվում և իր վրայից հանում է անվերահսկելի գնաձի համար պատասխանատվությունը և հրաժարվում է կարգավորումից: Սակայն մի շարք դեպքերում վարչաիրավական մեթոդների կիրառումն անհրաժեշտ է: Չի կարելի հույսը դնել միայն տնտեսական կամ վարչաիրավական մեթոդների վրա, որքան էլ որ վարչարարության տարրեր է պարունակում ցանկացած տնտեսական կարգավորիչ: Այսպես, օրինակ՝ դրամաշրջանառությունն իր վրա զգում է այնպիսի հայտնի տնտեսական մեթոդի ազդեցությունը, ինչպիսին է կենտ-

րոնական բանկի վարկի հաշվառման դրույթաչափը, սակայն ոչ շուտ, քան կընդունվի համապատասխան վարչական որոշումը: Մյուս կողմից, յուրաքանչյուր վարչական կարգավորիչի մեջ առկա է որոշ տնտեսական տարր, այն իմաստով, որ այն անուղղակիորեն ազդում է տնտեսական գործընթացի մասնակիցների վրա¹: Դիմելով, ասենք, գների ուղղակի վերահսկմանը՝ պետությունն արտադրողների համար ստեղծում է հատուկ տնտեսական ռեժիմ՝ ստիպելով նրանց վերանայել արտադրական ծրագրերը և այլն: Կարգավորման վարչաիրավական մեթոդներն անհրաժեշտ են հետևյալ նկատառումներով.

1) խիստ անհրաժեշտ է իրականացնել պետական վերահսկողություն մենաշնորհների նկատմամբ: Այդպիսիք դժվար է սանձահարել զուտ տնտեսական մեթոդներով. այս դեպքում թույլատրելի է անգամ գների պետական կարգավորումը (օրինակ՝ բնական մենաշնորհների դեպքում),

2) առավելապես վարչական կարգավորման են ենթակա շուկայական գործընթացների կողմնակի դրսևորումները: Այդ բնագավառում տնտեսական կարգավորիչներն անբավարար են, իսկ երբեմն էլ՝ ընդհանրապես անարդյունավետ: Անհրաժեշտ են տնտեսական գործունեության կոշտ չափորոշիչներ, որոնք բնակչության համար կստեղծեն էկոլոգիական անվտանգություն,

3) բացի տնտեսական չափորոշիչներից, կան նաև մեծ թվով այլ գործոններ, որոնք ևս միտված են պետական անուղղակի կարգավորմանը: Վարչական կարգավորման կարևոր բնագավառներից են հիշյալ չափորոշիչների մշակումը և տնտեսական համակարգի բոլոր մասնակիցների կողմից դրանց պահպանման նկատմամբ վերահսկողությունը,

4) բնակչության նվազագույն թույլատրելի կենսապայմանների կողմնորոշիչների սահմանումը և պահպանումը: Սա ներառում է նվազագույն աշխատավարձի և կենսամակարդակի սահմանումը, գործազուրկների, բազմազավակ ընտանիքների նպաստները և այլն,

5) նպատակային ծրագրերի իրականացման ապահովումը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ վարչաիրավական մեթոդները նպատակային ծրագրերի դեպքում ևս կիրառելի են, դրանք վնասակար են միայն այն դեպքում, երբ տնտեսապես հիմնավորված չեն:

Նպատակահարմար է առանձնացնել տնտեսության պետական կարգավորման ուղղակի և անուղղակի մեթոդները: *Ուղղակի* մեթոդների տակ հասկացվում է տնտեսությունում պետական հատվածի անմիջական գործունեությունը²: Բոլոր արդյունաբերական զարգացած երկրներում գոյություն ունի տնտեսության շատ թե քիչ նշանակալից պետական հատված: Դրանց ծավալները կարող են չափանիշ լինել պետության տնտեսական դերի մասին, թեպետ չեն բացառվում նաև հակառակ զարգացումները: Պետությունը տիրապետում է ամենատարբեր միջոցների, վարկ է տրամադրում, բաժնային մասնակցություն ունի, սեփականատեր է, այդ թվում՝ արտադրական օբյեկտների: Արևմտյան երկրների պետական հատվածներում զբաղված է մարդկանց բավական ստվար խումբ. 11%՝ Ֆրանսիայում և Իտալիայում, 8-9%՝ Գերմանիայում, Բելգիայում և Նիդերլանդներում և այլն: Խոսքը, որպես կանոն, այն ձյուղերի մասին, որտեղ ներդրումային ներուժը՝ արտադրության համար անհրաժեշտ մեքենաների և սարքավորումների համակցության արժեքը, շատ բարձր է: Սակայն

¹ St'u Ноздрачев А.Ф. Содержания института административно-правового регулирования экономических отношений; Институты административного права: третье (Лазеревские чтения) // ГиП 1999, N 10, էջ 15:

² St'u Бахрах Д. Н., Хазанов С. Д. Формы и методы деятельности государственной администрации, Екатеринбург, 1999, էջ 87-88:

ներդրումային ներուժի այդպիսի մեծությունն այդ ճյուղերը դարձնում է շատ զգայուն մրցակցության և պարբերական ձգնաժամերի հանդեպ:

Պետության ուղղակի միջամտությունը նաև օրենսդրական ակտերի ընդունումն է, որոնք կոչված են կանոնակարգելու և զարգացնելու շուկայական համակարգի բոլոր տարրերի միջև առկա հարաբերությունները:

Անուղղակի միջամտությունը ենթադրում է պետական կարգավորման իրականացումը պետության տնտեսական քաղաքականության գործիքների օգտագործման միջոցով, ինչպիսիք են հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը:

Կախված տնտեսական քաղաքականությանը միջամտելու նպատակից՝ տնտեսական քաղաքականության մեթոդները կարող են ուղղված լինել՝ ա) կապիտալ ներդրումների խթանմանը և խնայողությունների ու ներդրումների միջև անհրաժեշտ հավասարակշռություն ապահովելուն, բ) լրիվ զբաղվածության ապահովմանը, գ) ապրանքների, կապիտալի, աշխատուժի արտահանման և ներմուծման խթանմանը, դ) գների ընդհանուր մակարդակի և առանձնահատուկ բնույթ ունեցող որոշ գների կայունացման վրա ազդելուն, ե) կայուն տնտեսական աճ ապահովելուն և գ) եկամուտները վերաբաշխելուն և այլ նպատակների:

Վարչաիրավական մեթոդները ներառում են արգելանքի, թուլտվության և հարկադրանքի միջոցները: Դրանց ոլորտները հիմնականում սահմանափակվում են շրջակա միջավայրի պահպանությամբ, բնակչության սոցիալապես համեմատաբար թույլ պաշտպանված խավերի համար նվազագույն կենցաղային պայմանների ստեղծմամբ: Սակայն այդ միջոցի դերը մեծապես աճում է, օրինակ, պատերազմի, տարերային աղետի, ինչպես նաև տնտեսության ձգնաժամային վիճակի դեպքում:

Պետության խնդիրները և գործառույթները, այդ թվում նաև տնտեսության պետական կարգավորման գործառույթներն իրականացնում են պետական իշխանության արմինները: Այդ բնագավառում հատկապես մեծ է պետական իշխանության գործադիր մարմինների դերը:

Օրենսդիր իշխանության մարմնից զատ տնտեսության պետական կարգավորմանը գործուն մասնակցություն են ցուցաբերում նաև գործադիր իշխանության մարմինները: Վերջիններս իրականացնում են հետևյալ գործառույթները՝

1) գործադիր իշխանության մարմինների, վերջիններիս պաշտոնատար անձանց կողմից Սահմանադրության, օրենքների հիման վրա և ի կատարումն դրանց նորմատիվ իրավական ակտերի ընդունումը,

2) վերահսկողություն, այն է՝ ա) գործադիր իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների կողմից սահմանադրությամբ, օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված վարքագծի համապարտադիր կանոնների կատարման նկատմամբ իրականացվող վերաբնակողությունը, բ) գործադիր իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց կողմից իրավաբանական անձանց և քաղաքացիներին գործունեության որոշակի տեսակների իրականացման և (կամ) կոնկրետ գործողությունների կատարման թույլտվություններ (լիցենզիաներ) տրամադրելը, գ) ակտերի, փաստաթղթերի, իրավունքների, օբյեկտների գրանցումը, ինչպես նաև անհատական իրավական ակտերի հրատարակումը, պետական գույքի կառավարումը՝ պետական գույքի նկատմամբ սեփականատիրոջ լիազորությունների իրականացումը,

3) պետական ծառայությունների մատուցումը՝ առողջապահության, կրթության, բնակչության սոցիալական պաշտպանության և ՀՀ օրենքներով սահմանված այլ

բնագավառներում. քաղաքացիներին և կազմակերպություններին գործադիր իշխանության մարմինների կողմից անմիջականորեն կամ իրեն ենթակա պետական հիմնարկների կամ այլ կազմակերպությունների կողմից անվճար կամ պետական իշխանության մարմինների կողմից կարգավորող գներով ծառայությունների մատուցումը:

Այսպիսով, ամփոփելով կարելի հանգել հետևյալ եզրահանգումներին՝

1. Շուկայական տնտեսությունը պահանջում է, որ պետության մասնակցությունը տնտեսության կառավարմանը սահմանափակվի հիմնականում կազմակերպական գործառույթների իրականացմամբ:

2. Վարչաիրավական կարգավորման էությունը սոցիոլոգիական, նորմատիվ և գործնական չափանիշների այնպիսի ամբողջություն է, որն սկսվում է այն պահից, երբ առաջանում է հանրային պահանջ՝ կարգավորելու հասարակական հարաբերությունները, այդ թվում նաև՝ տնտեսական:

3. Պետությունը դադարել է անմիջական ազդեցություն ունենալ տնտեսվարող սուբյեկտների գործունեության վրա և ձեռք է բերել նոր պայմաններին բնորոշ գործառույթներ, այն է. ա) տնտեսության գործառույթյան իրավական հիմքերի ստեղծում և կարգավորում, բ) հակամենաշնորհային կարգավորում, գ) մակրոտնտեսական կայունացման քաղաքականության անցկացում, դ) պաշարների տեղաբաշխման վրա ներգործություն, ե) եկամուտների վերաբաշխում, զ) պետության գործունեությունը՝ որպես գույքային հարաբերությունների սուբյեկտ:

4. Նշված ոլորտում պետության գործառույթների դասակարգումը բավականին պայմանական է, քանի որ իրականում բոլոր գործառույթները փոխկապակցված են ու գործում են համալիր ձևով:

5. Պետական կարգավորման գործառույթներին համապատասխանում են դրա իրականացման մեթոդները:

Ինչ խոսք, իրավաչափ կարող է համարվել սոսկ պետական կարգավորման առավել ընդհանուր գծերի մասին դատողություններ անելը, միաժամանակ ակնհայտ է, որ կոնկրետ այս կամ այն ոլորտում վերը նշված առաջարկությունները կարող են գործել որոշակի վերապահումներով:

ФУНКЦИИ И ПРАВОВЫЕ МЕТОДЫ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ ЭКОНОМИКОЙ

Самвел Мурадян

*Доцент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук*

Рыночная экономика требует отграничения участия государства в управлении экономикой. Оно должно реализовать исключительно организационные функции. Государство утратило роль непосредственного воздействия на деятельность хозяйственных субъектов и приобрело функции, соответствующие новым условиям: правовое регулирование экономикой, контроль, лицензирование, антимонопольное регулирование и т.д. Этим функциям государства соответствуют методы их реализации.

FUNCTIONS AND LEGAL METHODS OF STATE REGULATION OF ECONOMY

Samvel Muradyan

*Docent of the YSU Chair of Constitutional Law,
Candidate of Legal Sciences*

Market economy demands that Government's party in the field of economy must be limited only with organization functions. Government now have no any direct influence in economy. The transformation from planning public administration to market economy demands a new methods of public administration: law regulation, supervision in the field of economy, public defending of the laws of the members in the field of economy, the co-ordination in the field of economy, fiscal functions, license and so on.

Բանալի բառեր - շուկայական տնտեսություն, պետական կարգավորման գործառնություններ, իրավական մեթոդներ, իրավական կարգավորում, վերահսկողություն, արտոնագրում, հակամենաշնորհային կարգավորում:

Ключевые слова – Рыночная экономика, государственное управление, функции государства: правовое регулирование, контроль, лицензирование, методы.

Key words: Market economy, organization functions, methods of public administration, methods of public administration, control.